ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ֆիզիկական անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման վերաբերյալ

2024

Ուղեցույցի նպատակն է ներկայացնել ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն անձնական օգտագործման տրասպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման դեպքում գործող կարգավորումները

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

1. Ենթակա են արդյո՞ք հայտարարագրման ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ժամանակավոր ներմուծվող՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միության) անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները.

Այո, ֆիզիկական անձանց կողմից՝ ***Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված*** անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ***ժամանակավոր ներմուծելիս ենթակա են պարտադիր գրավոր հայտարարագրման՝ ուղևորային մաքսային հայտարարագրի միջոցով***:

2. Ինչ առավելագույն ժամկետով է թույլատրվում ֆիզիկական անձանց կողմից՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Հայաստանի Հանրապետության տարածք.

Ֆիզիկական անձանց կողմից՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Հայաստանի Հանրապետության տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

3. Ինչ պայմանով է թույլատրվում՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծումը՝ Միության *անդամ պետության ֆիզիկական անձին*.

Միության անդամ պետության ֆիզիկական անձին (այսուհետ՝ միության անձ)՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, ժամանակավոր ներմուծումը Հայաստանի Հանրապետության տարածք, թույլատրվում է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին (այսուհետ՝ Օրենսգիրք) համապատասխան *մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրելու պայմանով*:

Ուշադրություն

- ✓ ***Միության անձը՝ համաձայն Օրենսգրքի դա անդամ պետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձն է:***

Համաձայն Հայաստանի Հանրապետության 24. 09. 2002թ-ի «Բնակչության պետական ռեգիստրի մասին» թիվ ՀՕ 419-Ն օրենքի 7-րդ հոդվածի՝ **«Մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան»:**

- ✓ ***Օտարերկրյա ֆիզիկական անձը՝ համաձայն Օրենսգրքի միության ֆիզիկական անձ չհանդիսացող անձն է:***
- ✓ ***Միության ֆիզիկական անձի կողմից*** **Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման դեպքում՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ՀՀ կառավարության 2023թ-ի նոյեմբերի 30-ի թիվ 2060-Ն որոշման համաձայն *ենթակա է ապահովման միայն դրամական միջոցներով (փողով)*:**

4. Արդյո՞ք Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցը օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից ժամանակավոր ներմուծելիս առաջանում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարման ապահովում տրամադրելու անհրաժեշտություն.

Օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարման ապահովում տրամադրելու անհրաժեշտությունը առաջանում է այն դեպքում՝ երբ Միության մաքսային տարածքից օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից *նախկինում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների չարտահանված լինելու պարագայում՝* այդպիսի անձանց կողմից ժամանակավոր ներմուծվում են Միության անդամ չհանդիսացող պետություններում գրանցված *երկրորդ և հաջորդ տրանսպորտային միջոցները:*

Ուշադրություն

- ***Անձնական օգտագործման երկրորդ և հաջորդող տրանսպորտային միջոց ասելով պետք է հասկանալ նույն տեսակի անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը (ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոց, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցի կցորդ, նավ կամ օդանավ), ինչ և նախկինում Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավորապես ներմուծված և Հայաստանի Հանրապետության տարածքից չարտահանված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցն է:***
- ***Օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման դեպքում՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը, դրա ապահովման անհրաժեշտության դեպքում, ենթակա է ապահովման միայն դրամական միջոցներով (փողով):***

5. Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության տարածքում ու՞մ փաստացի տիրապետման և օգտագործման ներքո պետք է գտնվեն.

Որպես ընդհանուր կանոն ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման և օգտագործման ներքո:

Ուշադրություն

Այն դեպքերը և պայմանները, որի համաձայն ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են հայտարարատուի կողմից փոխանցվել այլ անձի, այդ թվում՝ այն անձին, որին սեփականության իրավունքով պատկանում է այդ տրանսպորտային միջոցը՝ սահմանվում են Օրենսգրքի 264-րդ հոդվածով:

6. *Առանց մաքսային մարմնի թույլտվության և առանց մաքսային հայտարարագրի ե՞րբ է թույլատրվում անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների փոխանցումը հայտարարատուի կողմից.*

Առանց մաքսային մարմնի թույլտվության և առանց մաքսային հայտարարագրի թույլատրվում է հայտարարատուի կողմից անձնական օգտագործման հետևյալ տրանսպորտային միջոցների փոխանցումը՝

- ✓ ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ այլ անձանց տիրապետմանը՝ տեխնիկական սպասարկում, վերանորոգում (բացառությամբ՝ կապիտալ վերանորոգման, արդիականացման) իրականացնելու և (կամ) դրանք պահպանելու համար.
- ✓ միության ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ նրա ծնողներին, երեխաներին, գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսնուն (կնոջը).
- ✓ օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ օտարերկրյա այլ ֆիզիկական անձանց:

7. ***Մաքսային մարմնի թույլտվությամբ և առանց մաքսային հայտարարագրման ո՞ր տրանսպորտային միջոցների փոխանցումն է թույլատրվում.***

Մաքսային մարմնի թույլտվությամբ և առանց մաքսային հայտարարագրման թույլատրվում է հայտարարատուի կողմից հետևյալ տրանսպորտային միջոցների փոխանցումը՝

- ✓ օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ միության ֆիզիկական անձին՝ Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանով.
- ✓ ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ այլ անձի՝ անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածքից արտահանելու համար, եթե այդ արտահանումը չի կարող իրականացվել հայտարարատուի կողմից՝ նրա մահվան, ծանր հիվանդության կամ օբյեկտիվ այլ պատճառով:

8. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված Հայաստանի Հանրապետություն մուտք գործող՝ անձնական օգտագործման ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ բնապահպանական հարկի ի՞նչ դրույքաչափեր են սահմանված.

Հայաստանի Հանրապետությունում չգրանցված՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձնական օգտագործման ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ Հայաստանի Հանրապետություն յուրաքանչյուր մուտքի համար՝ ըստ դրանց տեսակի և բեռնատարողության սահմանված են բնապահպանական հարկի հետևյալ դրույքաչափերը.

Ծածկագիրը՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ավտոտրանսպորտային միջոցի նկարագիրը	Դրույքաչափը (դրամ)	
		Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ծխայնության) պարունակության սահմանային թույլատրելի	
		նորմաների սահմաններում կատարվող արտանետումների դեպքում	նորմաների սահմաններից ավելի՝ վերոգրյալ նյութերից առնվազն մեկի գծով արտանետումների դեպքում
8703 21-8703 33	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված մինչև տասը մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար	3750	7500
8702	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված տասը և ավելի մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար, բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների	10 000	20 000
8704 21 8704 31	բեռների փոխադրման համար՝ հինգ տոննայից ոչ ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	5 000	10 000

❖ ***Անհրաժեշտ է իմանալ նաև, որ ցանկացած տրանսպորտային միջոց վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք տեղափոխելիս՝ հարկավոր է կնքել ԱՊՊԱ պայմանագիր***

Առանց ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ավտոտրանսպորտային միջոցը վարելու համար սահմանված է տուգանք 100 000 դրամի չափով՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի համաձայն:

Ուշադրություն

✓ ***Դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների աշխատողների, նրանց հետ բնակվող իրենց ընտանիքի անդամների և նմանատիպ կարգավիճակ ունեցող մի շարք այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է Օրենսգրքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան:***

✓ ***ԵԱՏՄ անդամ այլ պետություններում գրանցված անձնական օգտագործման ավտոտրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծելիս այդ տրանսպորտային միջոցները հայտարարագրման ենթակա չեն:***

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am